

## Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին



Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժինը Հայաստանի ազգային գրադարանի մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանում է:

Բաժինը իրականացնում է մշակույթի աշխատողների, ինչպես նաև քարտեզագրությամբ զբաղվող մասնագետների, դասախոսների, ուսանողների, արվեստով հետաքրքրվող անձանց սպասարկումը: Իր գործունեությամբ նպաստում է Հայաստանի բուհերի, մասնավորապես ճարտարապետա - շինարարական, պետական և մանկավարժական համալսարանների արվեստի բաժիններում սովորող ուսանողների մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը: Ընթերցողներին տրամադրում է ազգային և արտասահմանյան տպագիր արտադրանքը առանց սահմանափակումների, նրանց պահանջմունքներին համապատասխան:



Բաժնում կատարվում է արվեստի գրականության և քարտեզագրական նյութերի հետ տարվող գրադարանային մատենագիտական բոլոր գործընթացները մասնակի համալրում, վերամշակում, գրացուցակների և քարտարանների կազմում, ֆոնդերի պահպանում և սպասարկում:

Բաժինը տարվա ընթացքում կազմակերպում է միջոցառումներ, արվեստի գրականության տեսություններ, գրքի շնորհանդեսներ:

Բաժնի ֆոնդը առ 1-ը հունվարի 2016թ. կազմել է 216.706 միավոր գրականություն, որից 52.676 միավոր գիրք, 418 միավոր տեղեկատու գրականություն, 11.143 միավոր ամսագիր, 152.469 միավոր ոչ գրքային հրատարակություն:

## **Բաժնի առկա գրացուցակներն ու քարտարաններն են.**

- Ընթերցողական կարգային գրացուցակ
- Կարգային ծառայողական գրացուցակ
- Այբբենական գլխավոր գրացուցակ
- Քարտեզագրական նյութերի այբբենական և կարգային գրացուցակ
- Բնօրինակների գրացուցակ
- Լուսանկարների գրացուցակ
- Ֆոտոխրոնիկա, այբբենական և կարգային գրացուցակ
- Վերատպությունների այբբենական գրացուցակ
- Օրացույցների ժամանակագրական և կարգային գրացուցակ
- Բացիկների այբբենական և կարգային գրացուցակ
- Հրավիրատոմսերի և ծրարների գրացուցակ
- Պլակատների կարգային գրացուցակ
- Դրամների, մատենանիշների, նամականիշների գրացուցակ
- Տեղեկատու գրականության քարտարան
- Արվեստի գրականության կարգային քարտարան
- Առարկայական քարտարան
- Ժամանակակից նկարիչների քարտարան
- Հայ գրքի նկարիչ – ձևավորողների քարտարան

## **Նոտային-երաժշտական գրականություն**

Նոտային-երաժշտական գրականության բաժինը Ազգային գրադարանի մասնագիտացված ստորաբաժանումներից մեկն է, ուր աշխատանքները և սպասարկումը կազմակերպվում են բաժնի ֆոնդերի հիման վրա: Որպես առանձին բաժին՝ այն ձևավորվել է 1928թ. հայ երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանի նախաձեռնությամբ: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ երաժշտական գրականությունը տարանջատվում է ընդհանուր ֆոնդից՝ նպատակ ունենալով գրադարանում ստեղծել հատուկ երաժշտական բաժին, որը պետք է կատարեր երաժշտական բոլոր հրատարակությունների հետ կապված աշխատանքները՝ մշակում, սպասարկում և պահպանման հատուկ ձև: Այս ձևաչափի մեջ Ազգային գրադարանի նոտային-երաժշտական բաժինն առաջինն էր Հայաստանի Հանրապետությունում:

Բաժնի հավաքածուի հիմնական մաս կազմում են երաժշտական գրականությունը, նոտագիր նյութերը, պարբերական հրատարակությունները, էլեկտրոնային կրիչները (ձայնագրակ, ձայներիգ, ձայնակավառակ), տեղեկատու նյութերը՝ տարբեր լեզուներով: Սկզբնական շրջանում ֆոնդը կազմել է 14.000 միավոր նոտային գրականություն: Այժմ բաժնի հավաքածուն ներառում է 128.546 միավոր գրականություն: Այստեղ է պահպանվում Մ. Մաշտոցի, Գ. Նարեկացու, Ն. Շնորհալու և այլ երևելի այրերի հոգևոր երաժշտական ժառանգությունը:

Բաժնի ձայնադարանում առանձնահատուկ է էլեկտրոնային կրիչների (ձայնապնակ, ձայներիզ, պատրաստել և հրատարակել է հայ ականավոր կոմպոզիտորների հետևյալ մատենագիտությունները՝

1. Քրիստափոր Կարա-Մուրզա: Համառոտ բիբլիոգրաֆիա / Կազմ՝ Ն. Ա. Թեյմուրազյան. – Երևան, 1956:
2. Մակար Եկմայան: Համառոտ բիբլիոգրաֆիա / Կազմ՝ Ն. Ա. Թեյմուրազյան. – Երևան, 1959:
3. Տիգրան Չուխաջյան: Մատենագիտություն / Կազմ՝ Ն. Ա. Թեյմուրազյան, Զ. Մեմյոնովա. – Երևան, 1964:
4. Կոմիտաս: Մատենագիտական ժողովածու / Կազմ՝ Ռ. Ղազարյան.- Երևան, 2009:
5. Տիգրան Մանսուրյան: Կենսամատենագիտություն / Կազմ՝ Ռ. Թումայան, Ա. Վարդանյան. – Երևան, 2014:

Արտերկրում գործող կազմակերպությունների և անհատների հետ համագործակցության արդյունքում նոտային հավաքածուն համալրվում է արժեքավոր գրականությամբ՝ միաժամանակ ստեղծելով լայն հնարավորություններ՝ հայկական և համաշխարհային երաժշտական արվեստի տարբեր ստեղծագործություններին ծանոթանալու համար: Արժեքավոր ձեռքբերումներ են Արա Ղազարյանցի, Զիա Այվազյանի, Լևոն Հակոբյանի, Լիլյա Գրիգորյանի, Անուշ Գրիգորյանի, Նուբար Ասլանյանի և այլոց նվիրատվությունները: Բաժինը սերտ կապեր է հաստատել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երաժշտագիտական գրադարանի, մայրաքաղաքի երաժշտական դպրոցների հետ:

Կազմակերպվում են թեմատիկ և հորեյանական ցուցահանդեսներ, հանդիպումներ երաժշտական գործիչների հետ, երաժշտական և մատենագիտական տեսություններ, տրամադրվում է գրականություն ցուցահանդեսների համար: Ընթերցողները կարող են օգտվել բաժնի ֆոնդերն արտացոլող տարաբնույթ գրացուցակներից:

Նրանց տրամադրվում են լսողական սարքեր, նաև դաշնամուր: Ժամանակակից գրադարանը կարող է ընթերցողին տալ նյութերի ուսումնասիրության լայն միջոցներ: Հենց այս նպատակով բաժնում սկսվեցին էլեկտրոնային քարտարանների ստեղծման աշխատանքները: Աշխատակիցները ստեղծում, վարում և անձնագրավորում են գրացուցակները:

Նոտային-երաժշտական գրականության բաժնի քարտարանների տեսակները .

1. Հայերեն գրքերի այբբենական գրացուցակ
2. Հայերեն նոտային գրականության այբբենական և կարգային գրացուցակներ
3. Հոգևոր գրականության այբբենական գրացուցակ
4. Հատորային-նոտային գրականության այբբենական գրացուցակ
5. Օտար լեզվով գրականության այբբենական գրացուցակ
6. Օտար լեզվով (ռուսերեն և այլալեզու) նոտային գրականության այբբենական և կարգային
7. Ամսագրերի և թերթերի այբբենական գրացուցակ
8. Մանր նյութերի այբբենական (գրացուցակ ձայնապնակ, ձայներիզ, էլեկտրոնային կրիչներ (ձայնասկավառակ):